ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 27.05.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2021/128

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝

«Սոֆոն» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Հ. Օհանյանի (լիազորագիր՝ տրված 21.05.2021թ.),

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 18.05.2021թ. թիվ 26/26-1/7883-2021 գրությամբ «Սոֆոն» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ի 10.05.2021թ. թիվ Հ.Մ./02-98/21 գրության հիման վրա, 18.05.2020թ. թիվ 26/26-1/7883-2021 գրությամբ նախաձեռնել է «Սոֆոն» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն)

գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Սոֆոն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Սոֆոն» ՍՊԸ-ն, ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ, հայտնել է հետևյալը.

«Ձեր վարույթում է գտնվում «Հայաստանի հանրային հեռաուստաընկերություն» ՓԲԸ-ի (այսուհետև նաև՝ Պատվիրատու) գրավոր հիմքերի համաձայն, ՀՀ ֆինանսների նախարարության կողմից «Սոֆոն» ՍՊԸ-ին (այսուհետև նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ՝ ՍՑ-ՆԳ-2021/128 ծածկագրով ընթացակարգը:

Ընթացակարգը նախաձեռնելու համար Պատվիրատուն ՀՀ ֆինանսների նախարարություն է ներկայացրել 10.05.2021թ. թիվ Հ.Մ./02-98/21 գրությունը (այսուհետև նաև՝ Գրավոր հիմքեր): Պատվիրատուն հայտնել է, որ ՀՀՀ-ԳՀԱՊՁԲ-21/15 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 11-րդ չափաբաժնի մասով Մասնակցիը ճանաչվել է ընտրված մասնակից, սակայն պայմանագիր կնքելու առաջարկը ստանալուց սահմանված ժամկետում ստորագրված պայմանագիրը չի ներկայացրել:

Ուսումնասիրելով Ընթացակարգը նախաձեռնելու համար Պատվիրատուի ներկայացրած Գրավոր հիմքերը՝ հայտնում ենք, որ ամբողջությամբ առարկում ենք դրանց դեմ:

1.1. Մասնակիցը մասնակցելով ՀՀՀ-ԳՀԱՊՁԲ-21/15 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետև նաև՝ Մրցույթ) 11-րդ չափաբաժնի մասով ճանաչվել է ընտրված մասնակից: Մրցույթի 11-րդ չափաբաժնի ԳՄԱ ծածկագիրն է՝ 32411160/3 (այսուհետև նաև՝ Գնման առարկա):

1.2. Պատվիրատուն 30/03/2021թ.-ին www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում և www.armeps.am էլեկտրոնային համակարգում հրապարակել է թիվ ՀՀՀ-ԳՀԱՊՁԲ-21/15 ծածկագրով գնանշման հարցում:

1.3. Մրցույթը հրապարակելու պահին Գնման առարկան պարունակող գնումների պլանը Տեղեկագրում հրապարակված չէր:

2. Պատվիրատուի Գրավոր հիմքերի դեմ առարկության հիմքերը և փաստարկները.

2.1. Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետև նաև՝ Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով սահմանված է, որ տեղեկագիրը նույն օրենքով նախատեսված հրատարակման ենթակա տեղեկատվության հրապարակման նպատակով www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքն է:

Օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ գնումների պլանը, ներառյալ՝ փոփոխությունները, հաստատվելուն հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների պլանի:

Կարգի 4-րդ կետի համաձայն. «4. Գնման գործընթացը հետևյալ գործընթացների (գործառույթների) ամբողջությունն է՝ 1) գնումների պլանավորում. 2) գնման գործընթացի կազմակերպում (ներառյալ գնման առարկայի բնութագրերի հաստատումը). 3) պայմանագրի կնքում. 4) պայմանագրի կատարում և կառավարում:»:

Կարգի 16-րդ կետի համաձայն. «16. Գնման գործընթաց սկսելու համար գնման առարկան պետք է ներառված լինի գնումների պլանում: Գնման պահանջի ծագման օրը պետական գաղտնիք չպարունակող գնումների դեպքում հաստատված կամ փոփոխված գնումների պլանի հրապարակման օրն է, (...)»

Կարգի 17-րդ կետի համաձայն. «17. Գնման գործընթացի կազմակերպման իրավական հիմքը սահմանված պահանջներին համապատասխան հաստատված, իսկ Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ նաև հրապարակված, գնումների պլանի առկայությունն է»:

Կարգի 20-րդ կետի համաձայն. «20. Գնման գործընթացի ընթացակարգի կազմակերպման նպատակով գնման պահանջի ծագման օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում գրավոր սահմանվում են՝ 1) պատասխանատու ստորաբաժանում, և 2) գնումները համակարգող 3) գնման գործընթացների կազմակերպման ժամանակացույց: (...)»

Կարգի 21-րդ կետի համաձայն. «21. Եթե գնման գործընթացների կազմակերպման ժամանակացույցով այլ ժամկետ նախատեսված չէ, ապա գնման պահանջի ծագման օրվան հաջորդող քսան աշխատանքային օրվա ընթացքում պատասխանատու ստորաբաժանումը՝ 1) կազմում և հաստատում է գնման հայտը, (...)»:

Վերոգրյալ նորմերից հետևում է, որ պետական գաղտնիք չպարունակող գնման գործընթացը սկսելու համար անհրաժեշտ է ունենալ՝ տվյալ գնման գործընթացի

շրջանակներում ձեռքբերման ենթակա գնման առարկան պարունակող, սահմանված պահանջներին համապատասխան հաստատված ու Տեղեկագրում հրապարակված գնումների պլան, ընդորում՝ գնումների պլանի ձևը, դրա լրացման, հաստատման և հրապարակման կարգը սահմանված է ՀՀ կառավարության 2017 թվականի ապրիլի 13-ի N 390-Ն որոշմամբ: Այսպիսով, եթե նշյալ պահանջներին համապատասխանող գնումների պլանը Տեղեկագրում հրապարված չէ, ապա պատվիրատուն իրավունք չունի սկսել տվյալ գնման գործընթացը: Քանի որ պետական գաղտնիք չպարունակող գնման գործընթացի կազմակերպման իրավական հիմքը սահմանված պահանջներին համապատասխան հաստատված և Տեղեկագրում հրապարակված գնման առարկան պարունակող գնումների պլանի առկայությունն է: Հետևաբար, եթե գնման գործընթացը կազմակերպվել է առանց սահմանված պահանջներին համապատասխան հաստատված գնման առարկան պարունակող գնումների պլանը Տեղեկագրում հրապարակելու, ապա այդ գնման գործընթացը համարվում է կազմակերպված վերոգրյալ իրավական նորմերի խախտմամբ և առանց իրավական հիմքի, որպիսի պայմաններում այն չի կարող առաջացնել իրավաբանական հետևանքներ:

Ինչպես երևում է սույն գործի փաստական հանգամանքներից, Մրցույթի հրավերի և հայտարարության տեքստը Տեղեկագրում հրապարակելու պահին Գնման առարկան պարունակող գնումների պլանը Տեղեկագրում հրապարակված չէր: Ուստի նշյալից կարող ենք փաստել, որ Մրցույթը կազմակերպվել է վերագրյալ իրավական նորմերի խախտմամբ և առանց իրավական հիմքի, որպիսի պայմաններում կարելի է փաստել, որ Մրցույթը կազմակերպվել է ոչ իրավաչափ: Նշյալից էլ հետևում է, որ Մրցույթից ածանցյալ գործողությունները՝ ինչպիսին է Մասնակցին Ցուցակում ընդգրկելուն ուղղված Պատվիրատուի գործողությունները, իրավաբանական ուժ չեն կարող ունենալ:

Ցանկանում ենք նաև նշել Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի մի շարք որոշումներ, որտեղ վերոգրյալ իրավական նորմերի խախտմամբ կազմակերպված գնման գործընթացների շրջանակներում Ցուցակում մասնակցիներին ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգերը Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը մերժել է:

Ելնելով վերոգրյալից, կարծում ենք, որ այս Ընթացակարգի շրջանակներում անհրաժեշտ է կիրառել սույն դիրորոշման մեջ նշված Բողոքներ քննող անձի նախկինում

կայացրած որոշումներով արտահայտած իրավական դիրքորոշումները և մեկնաբանությունները, ու Մասնակցին Ցուցակում ներառելու Ընթացակարգը մերժել:

2.4. Ամփոփելով դիրքորոշման հիմքերը և փաստարկները, կարծում ենք, որ Պատասխանողը Մրցույթը անց է կացրել Օրենքով սահմանված կանոնների խախտմամբ:

3. Պահանջը.

Հիմք ընդունելով վերոնշյալը և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով և 50-րդ հոդվածով՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրում ենք ամբողջությամբ մերժել ՀՀ Ֆինանսների նախարարության կողմից «Սոֆոն» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված՝ ՍՑ-ՆԳ-2021/128 ծածկագրով ընթացակարգը»:

«Սոֆոն» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/128 ընթացակարգի շրջանակներում 24.05.2021թ. ժամը 09:45-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով իր հերթին պնդել է վերը շարադրված դիրքորոշումը:

3. <u>«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ն, (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 10.05.2021թ. թիվ Հ.Մ./02-98/21 գրությամբ, հայտնել է հետևյալը.

««Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲ ընկերության կարիքների համար «Համակարգչային տեխնիկայի, պարագաների և նյութերի» ձեռքբերման նպատակով՝ 2021 թվականի մարտի 30-ին հայտարարվել է «ՀՀՀ-ԳՀԱՊՁԲ-21/15» ծածկագրով գնման ընթացակարգի հայտարարությունը և հրավերը:

2021 թվականի ապրիլի 13-ի գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի գնահատման նիստում մրցույթի մասնակից «Սոֆոն» ՍՊԸ-ն, 11-րդ չափաբաժնի՝ որպես նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից՝ ճանաչվել է ընտրված մասնակից:

2021 թվականի ապրիլի 23-ին, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրեքի 36-րդ հոդվածի 2-րդ կետը, «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ն ծանուցել է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը: Սակայն, «Սոֆոն» ՍՊԸ-ն խախտել է ՀՀ գնումների մասին օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջները՝ պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում չի ստորագրել պայմանագիրը և չի ներկայացրել պայմանագրի ապահովումը:

Հիմք ընդունելով ՀՀ գնումների մասին օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի բ ենթակետը և ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի 526-Ն որոշման 45-րդ կետը՝ խնդրում ենք Ձեզ՝ «Սոֆոն» ՍՊԸ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու տարի ժամկետով»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով սույն ընթացակարգի շրջանակներում 24.05.2021թ. ժամը 09:45-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2021/128 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2021/128 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ի կարիքների համար համակարգչային տեխնիկայի, պարագաների և նյութերի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀՀ-ԳՀԱՊՁԲ-21/15» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որի հայտարարությունը և հրավերը տեղեկագրում (www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայք) հրապարակվել են ***<u>30.03.2021թ.</u>***:

2. «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ի կողմից կազմակերպված «ՀՀՀ-ԳՀԱՊՁԲ-21/15» ծածկագրով ընթացակարգի շրջանակում ձեռք բերվող գնման առարկայի մասով հաստատված գնումների պլանը տեղեկագրում հրապարակվել է ***<u>01.04.2021թ.</u>***:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 18.05.2021թ. թիվ 26/26-1/7883-2021 գրությունը, «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ի 10.05.2021թ. թիվ Հ.Մ./02-98/21 գրությունը՝ կից փաստաթղթերով, ինչպես նաև «Սոֆոն» ՍՊԸ-ի դիրքորոշումը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետը սահմանում է, որ **տեղեկագիրը** նույն օրենքով նախատեսված հրատարակման ենթակա տեղեկատվության հրապարակման նպատակով www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքն է:

Օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ **գնումների պլանը, ներառյալ՝ փոփոխությունները**, հաստատվելուն հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն **հրապարակում է տեղեկագրում**, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների պլանի:

Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա այն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի ապահովում: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի ապահովում:

Օրենքի 36-րդ հոդվածի համաձայն՝

1. Պայմանագիր կնքվում է գնահատող հանձնաժողովի որոշման հիման վրա՝ պատվիրատուի կողմից:

2. Սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը: Ընդ որում, պայմանագիրը կարող է կնքվել ոչ շուտ, քան սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալու օրվան հաջորդող երկրորդ աշխատանքային օրը:

3. Եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից: Պայմանագրով կանխավճար նախատեսվելու դեպքում սույն կետով նախատեսված ժամկետը սահմանվում է 15 աշխատանքային օր:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 4-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացը հետևյալ գործընթացների (գործառույթների) ամբողջությունն է՝

1) գնումների պլանավորում.

2) **<u>գնման գործընթացի կազմակերպում</u>** (ներառյալ գնման առարկայի բնութագրերի հաստատումը).

3) պայմանագրի կնքում.

4) պայմանագրի կատարում և կառավարում:

Կարգի 16-րդ կետի համաձայն՝ **<u>գնման գործընթաց սկսելու համար գնման առարկան պետք է ներառված լինի գնումների պլանում:</u> Գնման պահանջի ծագման օրը պետական գաղտնիք չպարունակող գնումների դեպքում հաստատված կամ փոփոխված գնումների պլանի հրապարակման օրն է**, իսկ պետական գաղտնիք պարունակող գնումների դեպքում՝ գնումների պլանի հաստատման կամ փոփոխման օրն է: Եթե տվյալ տարվա ընթացքում գնումների սկզբնական պլանում չներառված, լրացուցիչ գնումը կատարելու համար նախատեսվում են ֆինանսական միջոցներ, ապա գնումների պլանում կատարվում է լրացում:

Կարգի 17-րդ կետը սահմանում է, **որ գնման գործընթացի կազմակերպման իրավական հիմքը սահմանված պահանջներին համապատասխան հաստատված, իսկ Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ <u>նաև հրապարակված,</u> գնումների պլանի առկայությունն է:**

Կարգի 20-րդ կետի համաձայն՝ **գնման գործընթացի ընթացակարգի կազմակերպման նպատակով <u>գնման պահանջի ծագման օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում</u> գրավոր սահմանվում են՝**

1) **պատասխանատու ստորաբաժանում,** և

2) **գնումները համակարգող**

3) գնման գործընթացների կազմակերպման ժամանակացույց:

Կարգի 21-րդ կետի համաձայն՝ եթե գնման գործընթացների կազմակերպման ժամանակացույցով այլ ժամկետ նախատեսված չէ, ապա **<u>գնման պահանջի ծագման օրվան հաջորդող քսան աշխատանքային օրվա ընթացքում</u> պատասխանատու ստորաբաժանումը՝**

1) կազմում և հաստատում է գնման հայտը, որը ներառում է՝

ա. գնման առարկայի բնութագրերը:

Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի գ) պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ՝ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իր կողմից հաստատված հավաստում՝ ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, օրենքի 35-րդ հոդվածով

սահմանված ժամկետում, ներկայացրած գնային առաջարկի չափով որակավորման ապահովում ներկայացնելու պարտավորության մասին:

Կարգի 32-րդ կետի 12-րդ և 13-րդ ենթակետերի համաձայն՝

12) ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը հանձնաժողովի քարտուղարը տրամադրում է էլեկտրոնային եղանակով: Ապրանքների գնման դեպքում պայմանագրի նախագծում ներառվում է ընտրված մասնակցի կողմից հայտով ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը.

13) ընտրված մասնակցի կողմից հաստատված պայմանագրի նախագիծը պատվիրատուին ներկայացվում է գրավոր, և դա ներկայացնելու գրությունը հաշվառվում է պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգում: Պատվիրատուի ղեկավարի կողմից պայմանագրի նախագիծը հաստատվում է այդ իրավասության առաջացմանը հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում:

Նույն կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Այսպես, «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ի կարիքների համար համակարգչային տեխնիկայի, պարագաների և նյութերի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀՀ-ԳՀԱՊՁԲ-21/15» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որի հայտարարությունը և հրավերը տեղեկագրում հրապարակվել են ***30.03.2021թ.***:

Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Սոֆոն» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 13.04.2021թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից որոշում է կայացվել «Սոֆոն» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը 22.04.2021թ. էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցել է «Սոֆոն» ՍՊԸ-ին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը:

Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ն, ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 10.05.2021թ. թիվ Հ.Մ./02-98/21 գրությամբ, հայտնել է, որ «Սոֆոն» ՍՊԸ-ն պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում չի ստորագրել պայմանագիրը և չի ներկայացրել պայմանագրի ապահովումը:

Միևնույն ժամանակ անդրադառնալով «Սոֆոն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված դիրքորոշմամբ վկայակոչված այն փաստական հանգամանքին, որ Ընթացակարգի մասին հայտարարությունը և հրավերը տեղեկագրում հրապարակելու պահին Ընթացակարգով նախատեսված գնման առարկան պարունակող գնումների պլանը տեղեկագրում հրապարակված չի եղել, հարկ եմ համարում հայտնել հետևյալը.

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձն ուսումնասիրել է Պատվիրատուի կողմից տրամադրված և տեղեկագրում հրապարակված գնումների պլանի վերաբերյալ առկա տեղեկատվությունը և արձանագրել, որ այն հրապարակվել է ***01.04.2021թ.***՝ ավելի ուշ, քան Ընթացակարգի մասին հայտարարությունը և հրավերը, ընդ որում՝ վերոհիշյալ նորմերից բխում է, որ պատվիրատուի պատասխանատու ստորաբաժանման և գնումները համակարգողի համապատասխան իրավասություններն առաջանում են գնումների պլանի հրապարակման հաջորդող օրվանից:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ «ՀՀՀ-ԳՀԱՊՁԲ-21/15» ծածկագրով ընթացակարգը կազմակերպվել է առանց իրավական հիմքի, որի արդյունքում խախտվել են «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասով, ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 16-րդ և 17-րդ կետերով սահմանված պահանջները:

Հաշվի առնելով այն փաստական հանգամանքը, որ Ընթացակարգը կազմակերպվել է վերը նշված իրավական նորմերի խախտմամբ, գտնում եմ, որ իրավական հիմքի բացակայության պայմաններում կազմակերպված ոչ իրավաչափ Ընթացակարգից բխող բացասական հետևանքները չեն կարող մեկնաբանվել ի վնաս Ընկերության և արդյունքում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել և հանգեցնել «Սոֆոն» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 18.05.2021թ. թիվ 26/26-1/7883-2021 գրությամբ «Սոֆոն» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**